Կենցաղում հանդիպող վտանգավոր թափոններ

Դասապլան

Ներածություն

Դասապլանը խրախուսում է աշակերտներին ուսումնասիրել կենցաղում հանդիպող վտանգավոր թափոնները:
Մեր կենցաղում օգտագործվում են մի շարք քիմիկատներ, որոնք իրենց բնույթով վտանգավոր են և կարող են շատ վնասներ պատճառել դրանց օգտագործումն ու հեռացումը/վերացումը պատշաճ կերպով չկազմակերպելու դեպքում: Այս տեսակի նյութերից շրջակա միջավայրի աղտոտման և առողջության վրա բացասական ազդեցությունների ռիսկը շատ բարձր է: Թափոնների ոչ պատշաճ վերացումը, օրինակ՝ կենցաղում այրումը, վատ ազդեցություն ունի անհատների՝ մասնավորապես փոքր երեխաների վրա, քանի որ դրա արդյունքում արտանետում է դիոքսին:

Այս դասապլանն օգնում է աշակերտներին տարբերակել վտանգավոր թափոնները:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. կայունության աուդիտի իրականացում, ուսումնական պլանների փոխկապակցում, իրազեկում և ներգրավում:
Ուսումնական պլանների փոխկապակցում. գիտություն, բնապահպանություն, հասարակագիտություն:

Eco-Schools

9-12 Տարեկան

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- պարզել, թե տանն օգտագործվող որ ապրանքները կարող են իրենց բնույթով վտանգավոր լինել,
- թվարկել և դասակարգել վտանգավոր կենցաղային թափոնները:

4 QUALITY EDUCATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Պահանջվող ժամանակ/ տևողություն

Դասարանային աշխատանք 1. 90 րոպե

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Վտանգավոր թափոններ և պիտակներ
- ռեսուրս 1. Վտանգավոր թափոնների պիտակավորումների աղյուսակ՝ հասկանալու և մեկնաբանելու պիտակների գրվածքը
- ռեսուրս 2. Վտանգավոր թափոնների աղյուսակ
- վտանգավոր պիտակներով որոշ իրական ապրանքներ ուսուցչի կողմից՝ որպես ցուցադրման և գնահատման մաս
- խոշորացույց. կարող է օգտագործվել շատ փոքր տեքստով պիտակները կարդալու համար:

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Քննարկել և աշակերտներին ներկայացնել կենցաղում կիրառվող տարատեսակ ապրանքներ՝ նախատեսված մաքրության, անձնական խնամքի, վնասատուների դեմ պայքարի համար և նշել, որ տվյալ գործառույթների համար շուկայում առկա են զանազան բաղադրիչներով մի շարք ապրանքներ։
- Աշակերտներին ցույց տալ ապրանքների տարբեր փաթեթավորում, պիտակներ։
- Աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել որոշ վտանգավոր ապրանքների պիտակներ։
- Քննարկումն այնպես վարել, որ աշակերտները կարողանան տարանջատել հնարավոր վտանգները և հասկանան՝ ինչպես դրանց հետ վարվել աշխատելիս և հեռացնելիս։
- Աշակերտներին բաժանել խմբերի և տալ քննարկման տարբեր պիտակներ։
- Աջակցել աշակերտների քննարկումներին՝ բացահայտելու և վերհիշելու տարբեր ապրանքների պիտակների վրա նշված բառերն ու վտանգավոր բնույթ ունեցող տեսողական պատկերները, բառերը (վտանգավոր/ թունավոր և այլն) և նշանները (քայքայիչ, դյուրավառ)։
- Աշակերտներին հանձնարարել կարդալ այս պիտակների նախազգուշացնող հրահանգները և դասակարգել իրենց բացահայտումները վտանգավոր թափոնների աղյուսակում։
- Յուրաքանչյուր խմբի հանձնարարել դասարանին ներկայացնել իրենց հետազոտության արդյունքները։

Գնահատում

Աշակերտներին հանձնարարել կիսվել իրենց մտքերով, թե ինչպես կարելի է նվազեցնել վտանգավոր նյութերի օգտագործումը։

Դասուրս 1

Վտանգավոր թափոնների նշանների աղյուսակ. վտանգավոր թափոնների պիտակների ընկալումը

Ձեր տան, ավտոտնակի ներսում և շրջակայքում գտնվող բազմաթիվ ապրանքների պիտակների վրա կան վտանգավոր թափոնների նշաններ. դրանք են՝ խոհարարական սփրեյը, մաքրող միջոցները, ներկերը նոսրացնող միջոցները, կոյուղու մաքրման միջոցները, ապակու մաքրման հեղուկը և այլն: Վտանգավոր թափոնների պիտակների նշանները բաղկացած են երեք մասից.

1. Նկար
2. Շրջանակ
3. Նախազգուշացնող (ազդանշան) բառեր պատկերի ներքևում

1. Վտանգավոր թափոնների նշանների պատկեր
Նկարը տեղեկացնում է վտանգի տեսակի մասին:

ՊԱՅԹՈՒՑԻԿ
Տարան կարող է պայթել, եթե տաքացվի կամ ծակվի: Տարայից մետաղի կամ պլաստիկի դուրս թռչող կտորները կարող են լուրջ վնասվածքներ հասցնել՝ հատկապես աչքերին:

ՔԱՅՔԱՅԻՉ
Ապրանքը կարող է այրել Ձեր մաշկը կամ աչքերը: Կուլ տալու դեպքում այն կարող է վնասել կոկորդը և ստամոքսը:

ԴՅՈՒՐԱՎԱՌ
Ապրանքները հեշտությամբ կբռնկվեն ջերմության, բոցի կամ կայծի դեպքում: Ապրանքների հետ ցանկացած իր կարող է սկսել ինքնստինքյան այրվել:

ԹՈՒՅՆ
Քիմիական նյութը կուլ տալու, լիզելու, որոշ դեպքերում այն շնչելու կամ նրան դիպչելու պարագայում, կարող եք շատ լուրջ հիվանդանալ կամ մահանալ:

2. Վտանգավոր թափոնների նշանները շրջանակներով
Վտանգավոր թափոնի նշանի շրջանակի ձևը ցույց է տալիս, թե արտադրանքի որ մասն է վտանգավոր:

Եթե եռանկյուն է՝ նշանակում է, որ տարան վտանգավոր է:

Եթե ութանկյուն է՝ նշանակում է, որ տարայի պարունակությունն է վտանգավոր:

3. Ազդանշանային բառեր
Վտանգի նշանի տակ գտնվող ազդանշանային բառ(եր)ը բացատրում է (են) ռիսկի աստիճանը:

Ազդանշանային բառ՝ Վտանգավոր պայթուցիկ

Ազդանշանային բառեր.
- ԶԳՈՒՇԱՑՈՒՄ-ը նշանակում է, որ կարող է առաջանալ ժամանակավոր վնասվածք: Ծայրահեղ ազդեցության դեպքում կարող է մահ առաջացնել:
- ՎՏԱՆԳ-ը նշանակում է, որ հնարավոր է մշտական վնասվածք կամ մահ:
- ԾԱՅՐԱՀԵՂ ՎՏԱՆԳ-ը նշանակում է, որ նույնիսկ շատ քիչ քանակությամբ ազդեցությունը կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ վնասվածքների:

(Աղբյուր՝ https://www.canada.ca/en/health-canada/services/home-safety/household-chemica/-safety.html)